ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ---------- 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ. 111 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևանի հ. 111 հանրակրթական միջնակարգ դպրոցն անվանակոչել Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Զիվան Զավենի Աբրահամյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ « ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ. 111 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության նախագահի 20 սեպտեմբերի 1996թ. ՆՀ-650 հրամանագրով Ջիվան Զավենի Աբրահամյանին հետմահու շնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» կոչումը:

Երևանի հ. 111 հանրակրթական միջնակարգ դպրոցի մանկխորհրդի 23.04.2010թ. որոշմամբ առաջարկվել է ներկայացնել միջնորդություն՝ դպրոցը Ջիվան Զավենի Աբրահամյանի անվամբ անվանակոչելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հ.210207/45 08.02.2007թ. գրությամբ սահմանված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանակոչման չափանիշներին համապատասխան՝ դպրոցը կարող է անվանակոչվել Հայրենիքի պաշտպանությանը բացառիկ ծառայություն մատուցած և Հայաստանի ազգային հերոսի կոչմանն արժանացած անձանց անունով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ. 111 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի հ. 111 հանրակրթական միջնակարգ դպրոցը անվանակոչելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ